ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73, (093) 33-07-37
yeranos.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 25-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածի 12, 14, 30 մասերով, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 2-ի N 412-Ն որոշման կարգի 15.1 կետով, հիմք ընդունելով Երանոս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 10-ի N 10-Ն որոշումով հաստատված համայնքի(բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը, համայնքի ղեկավարին հասցեագրված հողամասի սեփականատեր Վարդգես Չոլոյանի դիմումը՝

որոշում եմ

1. Երանոս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը՝

Երանոս գյուղի վարչական սահմաններում գտնվող Վարդգես Չոլոյանին սեփականության իրավունքով պատկանող 05-033-0243-0014 կադաստրային ծածկագրով 0.092 հեկտար գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոփոխել համայնքի(բնակավայրի) պարզեցված հատակագծով նախատեսված նպատակային նշանակության՝ բնակավայրի հասարակական կառուցապատման.

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին կադաստրային արժեքի տարբերությունը կազմում է 175030(314640-139610=175030(մեկ հարյուր յոթանասուն հինգ հազար երեսուն) ՀՀ դրամ, նշված գումարը

հողամասի սեփականատերը համայնքի բյուջե պարտավոր է վճարել եռամսյա ժամկետում՝ մինչև 2015 թվականի հոկտեմբերի 29-ը.

3. 05-033-0243-0014 կադաստրային ծածկագրով 0.092 հեկտար բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին տալ հաշվառման հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գյուղ Երանոս, Երևանյան խճուղի թիվ 11:

4. Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը սահմանված կարգով արտացոլել հողային ֆոնդի հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում.

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՊԵՏՆԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

20 15թ.հուլիսի 28
գ.Երանոս